ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊՐՈԹԵԶԱՕՐԹՈՊԵԴԻԿ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԱՍՀՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/32-1-Ս»

ք. Երևան «06» հոկտեմբերի 2017թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն, ի դեմս նախագահ Հ. Հունանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 14570900 (տասնչորս միլիոն հինգ հարյուր յոթանասուն հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Սատար» Հաշմանդամների ՀԿ
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	ՀՀ ք. Երևան, Նոր-Արեշ 35 փ, 2
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011016723	Հ/Հ 16046027171300
ՀՎՀՀ 01506515	ՀՎՀՀ 02252332
Աշխատակազմի ղեկավար ..... Ա. Գրիգորյան	Նախագահ..... Հ. Հունանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
« 06» հոկտեմբերի 2017թ. կնքված
«ԱՍՀՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/32-1-Ս» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չ/մ	միավորի գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	Ժամկետը*
1	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	27400	191800	7	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
2	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	35000	35000	1	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
3	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	33900	3051000	90	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
4	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	50000	50000	1	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
5	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	54900	768600	14	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
6	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	107900	107900	1	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
7	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	162000	486000	3	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
8	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	306000	306000	1	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
9	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	277700	277700	1	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
15	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	236100	4485900	19	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
16	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	252000	1512000	6	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
17	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	244000	488000	2	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
18	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	295000	1180000	4	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
19	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	142000	142000	1	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
24	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	370000	370000	1	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
25	51411130	Ներկայացվում է ստորև	հատ	373000	1119000	3	Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017 թ.
Ընդամենը					**14570900**			

* *ծառայությունները մատուցվում են ըստ շահառուների դիմելիության:*

Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող օրթեզների պատրաստման ծառայությունները մատուցվում են ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, իսկ ծառայությունների մատուցումը կարգավորվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի հունիսի 27-ի N 92-Ա/1 հրամանով սահմանված կարգով, ստորև բերված ցուցանիշներին համապատասխան:

Որոշման համաձայն օրթեզ ստանալու իրավունք ունեցող անձանց /այսուհետ՝ շահառու/ տրամադրվում է՝

ՕՐԹԵԶՆԵՐ **Ճաճանչ-դաստակային օրթեզ առանց հոդի, պլաստիկից՝ Չափաբաժին 1** **Արմնկային օրթեզ առանց հոդի, պլաստիկից՝ Չափաբաժին 2** **Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, պլաստիկից(AFO)՝ Չափաբաժին 3** **Ծնկան հոդի օրթեզ առանց հոդի, պլաստիկից(KO)՝ Չափաբաժին 4** **Ամբողջ ոտքի օրթեզ առանց հոդի, պլաստիկից ՝ Չափաբաժին 5** **Սրունք-թաթային օրթեզ հոդով, պլաստիկից(AFO)՝ Չափաբաժին 6** **Ծնկան հոդի օրթեզ հոդով, պլաստիկից (KO)՝ Չափաբաժին 7** **Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, լամինացիայով՝ Չափաբաժին 8** **Ազդրի օրթոպրոթեզ պլաստիկից՝ Չափաբաժին 9**	
Չափաբաժինների ընդհանուր տեխնիկական բնութագրեր, առանձնահատկություններ և այլ պայմաններ	
Պատրաստման նյութեր և տեխնոլոգիա	միջազգային ISO ստանդարտներին համապատասխանող նյութերով և տեխնոլոգիաներով՝ կաշվե-մետաղական շինաներով, պլաստիկ արհեստական նյութերից, տեքստիլ և համակցված (բարձր ջերմաստիճանային և ցածր ջերմաստիճանային թերմոպլաստներ՝ պոլիպրոպիլեն և պոլիէթիլեն, նյութեր լամինացիայի համար, ածխապլաստիկ նյութեր և այլն): Հոդերը պատրաստվում են մետաղից (ալյումին, տիտան, երկաթ), պլաստիկից, կոմբինացված (պլաստիկ-մետաղ),մոդուլային, կարբոնային և այլն:
Պարագայի պատրաստման և/կամ տրամադրման պայմանները	Պատրաստման և տրամադրման առավելագույն ժամկետը 15 օր՝ կախված բարդության աստիճանից, որի ընթացքում կատարվում են անհրաժեշտ քանակի չափափորձարկումներ՝ մինչ պարագայի վերջնական հարմարեցումը շահառուին: Պատրաստման ժամկետը կարող է երկարաձգվել շահառուի մեղքով, եթե նա սահմանված ժամկետում չի ներկայանում չափափորձարկման: Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատապես, կատարելով համապատասխան չափագրումներ՝հաշվի առնելով ախտաբանական վիճակի բնույթը, ուղեկցող հիվանդությունների և վերքերի առկայությունը, բժշկի կողմից նշանակված օրթեզի կրման նպատակը, դեֆորմացիայի շտկման հատվածը և չափը: Շահառուին սովորեցվում է պարագայից օգտվելու ձևը և տրամադրվում է գրավոր տեղեկատվություն-հուշաթերթիկ դրա հիմնական

	տեխնոլոգիաների, երաշխիքային սպասարկման, պահպանման ու օգտագործման կանոնների, հերթական տրամադրման ժամկետի վերաբերյալ: Շահառուին է հանձնվում վերջնական փորձարկումից և նրա գրավոր համաձայնությունից հետո:
Չափաբաժիններին ներկայացվող պահանջները	Պետք է բավարարի շահառուի պահանջներին՝ բժշկական ցուցումներով թեթևությամբ անթրոպոմետրիկ տվյալներով տարիքային առանձնահատկություններով դիմացկունությամբ և ամրությամբ ֆունկցիոնալությամբ հարմարությամբ էսթետիկ տվյալներով
Վիճակը	Չօգտագործված, ամբողջությամբ նոր նյութերից և դետալներից պատրաստված
Երաշխիքային ժամկետ	Առանց հոդի օրթեզների համար՝վեց ամիս, հոդով օրթեզների համար՝ մեկ տարի, որի ընթացքում պահանջվող վերանորոգումները, որակի հետ կապված խնդիրների վերացումը (ընդհուպ նորով փոխարինումը) իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին, եթե թերությունը չի առաջացել շահառուի մեղավորությամբ:
Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը պետք է պատրաստվեն հիպոալերգիկ նյութերի: Օրթեզները պետք է բացառեն ճնշումը չթույլատրվող հատվածների վրա (ավշային հանգույցներ, կրծքագեղձեր, ոսկրային դուրս ցցված հատվածներ, մակերեսային անոթներ, նյարդեր), ելնելով անձի ֆիզիոլոգիական առանձնահատկություններից անհրաժեշտության դեպքում ներսից պատվեն փափուկ պոլիմերային կամ տեքստիլ նյութերով, բավարարեն շահառուի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին՝ հաշվի առնելով նրա հիմնական և ուղեկցող հիվանդությունների բնույթը, չպետք է խորացնեն առկա ախտաբանական խնդիրները:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

Չափաբաժին	Անվանում	Ենթատեսակ	Տեխնիկական բնութագիր
1	Ճաճանչ-դաստակային օրթեզ առանց հոդի, պլաստիկից	Ճաճանչ-դաստակային օրթեզ առանց հոդի, պլաստիկից	Տեղադրվում է դաստակին և ճաճանչ-դաստակային հոդին՝ մինչև նախաբազկի միջին-վերին 3-րդը, ամբողջովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող

2	Արմնկային օրթեզ առանց հոդի, պլաստիկից	2.1 Արմունկ-ճաճանչ-դաստակային օրթեզ առանց հոդի, պլաստիկից	Տեղադրվում է դաստակին, ճաճանչ-դաստակային հոդին, արմնկային հոդին՝ մինչև բազկի միջին-վերին 3-րդը, ամբողջովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող
		2.2 Արմնկային օրթեզ առանց հոդի, պլաստիկից	Տեղադրվում է արմնկային հոդին՝ նախաբազկի ստորին 3-րդից մինչև բազկի միջին-վերին 3-րդը, ամբողջովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող
3	Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, պլաստիկից (AFO)	4.1Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, պլաստիկից	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային հոդին՝ մինչև սրունքի միջին-վերին 3-րդը, լիովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող,
		4.2 Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի՝ որոշակի շարժումով, պլաստիկից	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային հոդին՝ մինչև սրունքի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս որոշակի շարժումներ սրունք-թաթային հոդում ճկունության շնորհիվ: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, որոշակի ֆունկցիոնալ
		4.3 Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի ՝ ծնկոսկրի (պատելլայի) կրումով, պլաստիկից	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային հոդին՝ մինչև ծնկան հոդը և հենվում է ծնկոսկրին: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, բեռնաթափող
		4.4 Սրունքի կոսմետիկ օրթեզ, պլաստիկից	Տեղադրվում է սրունքի շրջանում, ամբողջովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, կոսմետիկ
		4.5 Ոտնաթաթի օրթեզ, պլաստիկից (SMO)	Տեղադրվում է ոտնաթաթի և ս/թ հոդի շրջանում՝ մինչև սրունքի ս/3 շրջանը, լիովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, բեռնաթափող
		4.6 Ոտնաթաթի օրթեզ, պլաստիկից (UCBL)	Տեղադրվում է ոտնաթաթի շրջանում՝ մինչև ս/թ հոդի շրջանը, լիովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, տեղադրվում է կոշիկի մեջ: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, բեռնաթափող
4	Ծնկան հոդի	Ծնկան հոդի օրթեզ	Տեղադրվում է ծնկան հոդին, լիովին անշարժ է:

	օրթեզ առանց հոդի, պլաստիկից (KO)	առանց հոդի, պլաստիկից (KO)	Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող,
5	Ամբողջ ոտքի օրթեզ առանց հոդի, պլաստիկից	7.1 Ծունկ-սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, պլաստիկից (KAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը, լիովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող,
		7.2 Կոնք-ազդրային օրթեզ առանց հոդի, պլաստիկից (HO)	Տեղադրվում է կոնք-ազդրային հոդի շրջանում, լիովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող,
		7.3 Կոնք-ծնկային օրթեզ առանց հոդի, պլաստիկից (HKO)	Տեղադրվում է կոնք-ազդրային և ծնկան հոդերի շրջաններում, լիովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող
		7.4 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, պլաստիկից (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, ամբողջովին անշարժ է: Պատրաստվում է պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, բեռնաթափող
6	Սրունք-թաթային օրթեզ հոդով, պլաստիկից (AFO)	Սրունք-թաթային օրթեզ հոդով, պլաստիկից (AFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային հոդին՝ մինչև սրունքի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ սրունք-թաթային հոդում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
7	Ծնկան հոդի օրթեզ հոդով, պլաստիկից (KO)	Ծնկան հոդի օրթեզ հոդով, պլաստիկից (KO)	Տեղադրվում է ծնկան հոդին, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
8	Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, լամինացիայով	14.1 Ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան հոդով, լամինացիայով (KAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում, սրունք-թաթային հոդն անշարժ է: Արհեստական հոդն ունի անկյան

			կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
		14.2 Ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան և սրունք-թաթային հոդերով, լամինացիայով (KAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան և սրունք-թաթային հոդերում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
		14.3 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան հոդով, լամինացիայով (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, բեռնաթափող
		14.4 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան և սրունք-թաթային հոդերով, լամինացիայով (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան և սրունք-թաթային հոդերում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, բեռնաթափող
		14.5 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային հոդով, լամինացիայով (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային հոդում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ

		14.6 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային և ծնկան հոդերով, լամինացիայով (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային և ծնկան հոդերում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
		14.7 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային ծնկան և սրունք-թաթային հոդերով, լամինացիայով (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային, ծնկան և սրունք-թաթային հոդերում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից՝ լամինացիայով, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
9	Ազդրի օրթոպրոթեզ պլաստիկից	19.1 Ազդրի օրթոպրոթեզ պլաստիկից	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում, վերջույթի կարճացումը փոխհատուցվում է արհեստական ոտնաթաթով: Պատրաստվում է պլաստիկից և ժամանակակից մոդուլյար հոդերով և դետալներով **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, կոսմետիկ
		19.2 Եռակողմ զատիչ օրթեզ հոդով, պլաստիկից	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, ստորին վերջույթը գտնվում է զատված դիրքում, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում: Պատրաստվում է պլաստիկից և ժամանակակից մոդուլյար հոդերով և դետալներով **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, բեռնաթափող

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝

1. Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար վարել անձնական գործ (ներառյալ՝ հեռախոսահամար)
2. Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը.

3. Մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատուցումը, մասնավորապես, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների պատրաստման համար չափագրումներն ու չափափորձարկումները կազմակերպել արտագնա այցելությունների միջոցով՝ սահմանամերձ մարզերում առնվազն 2 ամիսը մեկ անգամ,մյուս մարզերում՝ ըստ անհրաժեշտության:
4. Շահառուին տրամադրել գրավոր տեղեկատվություն-հուշաթերթիկ մատուցված ծառայության, հիմնական տեխնիկական բնութագրերի, երաշխիքային սպասարկման, պահպանման ու օգտագործման կանոնների, հերթական տրամադրման ժամկետի վերաբերյալ՝ ***պատվիրատուից ստացած ձևաչափով***:
5. Իրենց դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրել տեղեկատվություն Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ ***պատվիրատուից ստացած ձևաչափով***:
6. Ունենալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ.

6) համապատասխան և մատչելի շենքային պայմաններ՝ քաղաքացիներին պատշաճ ընդունելու և սպասարկելու, արտադրության գործընթացը կազմակերպելու համար.

7. Ծառայություն մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ՝ ղեկավարվելով այդ համակարգի ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջներով և վարել շտեմարանը:

8. Ցուցակագրել և 2017 թվականի դեկտեմբերի 20-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել այն անձանց տվյալները, այդ թվում՝ անուն, ազգանուն, ծննդյան օր, անձնագրի սերիա, պարագայի անվանում, քանակ, հեռախոսահամար, ովքեր չեն սպասարկվել սույն տեխնիկական բնութագրերով նախատեսված պարագաների քանակը ավարտվելու պատճառով:

Ստորին վերջույթի պրոթեզ

Չափաբաժիններին ներկայացվող ընդհանուր պահանջները	
1. Ստանդարտ	**տեղական և ԱՊՀ կամ դրան համարժեք երկրներում թողարկվող նյութերով և տեխնոլոգիաներով արտադրվող**

2. Տեխնիկական ցուցանիշները	Շահառուի ստորին վերջույթների անդամահատվելուց առաջացած առանձնահատկությունների համապատասխան օգտագործվում է շինաներ, կոճեր, հանգույցներ, ինչպես նաև համապատասխան չափի կաշի, կապկա, շտրիպկա, վերտլուգներ, թաթեր՝ մետաղյա կամ ռեզինե
3. Անվտանգությունը	Շահառուին օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը լինեն չհրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկև ֆիզիկական պահանջներին
4. Գնման պայմաններ	Պրոթեզավորման գործընթացի միջին ժամկետի տևողությունը 15 օրից մինչև մեկ ամիս՝ կախված բարդության աստիճանից, որի ընթացքում կատարվում են չափափորձարկումներ, շահառուին սովորեցվում պրոթեզից օգտվելու ձևը
5.Պարագայի տրամադրումը	Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական և շահառուին հանձնվում փորձարկումից հետո
6.Երաշխիքային ժամկետը	Մեկ տարի, որի ընթացքում պահանջվող վերանորոգումներն իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
Չափաբաժին 15 Սրունքի պրոթեզ /կարճ ծայրատի համար՝ ՊՆ3-12	Սրունքի պրոթեզ՝ շահառուին համար *Անհրաժեշտության դեպքում պրոթեզի հետ տրամադրվում է ամրացնող կտորից հարմարանք:* *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:* *Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:*
Չափաբաժին 16 Սրունքի պրոթեզ /երկար ծայրատի համար/ ՊՆ3-14	Սրունքի պրոթեզ՝ շահառուին հարմար: *Անհրաժեշտության դեպքում պրոթեզի հետ տրամադրվում է ամրացնող կտորից հարմարանք* *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:* *Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:*
Չափաբաժին 17 Սրունքի պրոթեզ /կարճ ծայրատի համար/՝ ՊՆ3-22-1	Սրունքի պրոթեզ՝ շահառուին հարմար: *Անհրաժեշտության դեպքում պրոթեզի հետ տրամադրվում է ամրացնող կտորից հարմարանք* *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:* *Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:*

Չափաբաժին 18 Սրունքի պրոթեզ /կոսմետիկ երեսապատումով/՝ ՊՆ3-34	Սրունքի պրոթեզ՝ շահառուին հարմար: *Անհրաժեշտության դեպքում պրոթեզի հետ տրամադրվում է ամրացնող կտորից հարմարանք* *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:* *Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:*
Չափաբաժին 19 Սրունքի պրոթեզ /հեռացված է ամբողջ ոտնաթաթը, սրունք-թաթային հոդը պահպանված չէ/՝ ՊՆ3-01	Սրունքի պրոթեզ՝ շահառուին հարմար *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:* *Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:*
Չափաբաժին 24 Էնդոսկելիտար սրունքի պրոթեզ /պլաստիկից/՝ ՊՆ8-03	Էնդոսկելիտար սրունքի պրոթեզ /պլաստիկից/ *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:* *Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:*
Չափաբաժին 25 էնդոսկելիտար սրունքի պրոթեզ մանժետով/լամինացիայով/՝ ՊՆ8-02-1	էնդոսկելիտար սրունքի պրոթեզ մանժետով՝ լամինացիայով *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:* *Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:*

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝

1. Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար վարել անձնական գործ (ներառյալ՝ հեռախոսահամար)
2. Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը.
3. Մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատուցումը, մասնավորապես, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների պատրաստման համար չափագրումներն ու չափափորձարկումները կազմակերպել արտագնա այցելությունների միջոցով՝ սահմանամերձ մարզերում առնվազն 2 ամիսը մեկ անգամ,մյուս մարզերում՝ ըստ անհրաժեշտության:
4. Շահառուին տրամադրել գրավոր տեղեկատվություն-հուշաթերթիկ մատուցված ծառայության, հիմնական տեխնիկական բնութագրերի, երաշխիքային սպասարկման, պահպանման ու օգտագործման կանոնների, հերթական տրամադրման ժամկետի վերաբերյալ՝ ***պատվիրատուից ստացած ձևաչափով***:
5. Իրենց դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրել տեղեկատվություն Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում այլ

կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ ***պատվիրատուից ստացած ձևաչափով***:

6. Ունենալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ.

6) համապատասխան և մատչելի շենքային պայմաններ՝ քաղաքացիներին պատշաճ ընդունելու և սպասարկելու, արտադրության գործընթացը կազմակերպելու համար.

7. Ծառայություն մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ՝ ղեկավարվելով այդ համակարգի ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջներով և վարել շտեմարանը:

8. Ցուցակագրել և 2018 թվականի դեկտեմբերի 20-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել այն անձանց տվյալները, այդ թվում՝ անուն, ազգանուն, ծննդյան օր, անձնագրի սերիա, պարագայի անվանում, քանակ, հեռախոսահամար, ովքեր չեն սպասարկվել սույն տեխնիկական բնութագրերով նախատեսված պարագաների քանակը ավարտվելու պատճառով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Սատար» Հաշմանդամների ՀԿ
Աշխատակազմի ղեկավար ..... Ա. Գրիգորյան /ստորագրություն/ Կ.Տ	Նախագահ. ..... Հ. Հունանյան /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված N 2
« 26» հոկտեմբերի 2017թ. կնքված
«ԱՍՀՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/32-1-Ս» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	51411130	Ճաճանչ-դաստակային օրթեզ առանց հոդի, պլաստիկից										63294	126588	191800	191800
2	51411130	Արմնկային օրթեզ առանց հոդի, պլաստիկից										11550	23100	35000	35000
3	51411130	Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, պլաստիկից(AFO)										1006830	2013660	3051000	3051000
4	51411130	Ծնկան հոդի օրթեզ առանց հոդի, պլաստիկից(KO)										16500	33000	50000	50000
5	51411130	Ամբողջ ոտքի օրթեզ առանց հոդի, պլաստիկից										253638	507276	768600	768600
6	51411130	Սրունք-թաթային օրթեզ հոդով, պլաստիկից(AFO)										35607	71214	107900	107900
7	51411130	Ծնկան հոդի օրթեզ հոդով, պլաստիկից(KO)										160380	320760	486000	486000
8	51411130	Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, լամինացիայով										100980	201960	306000	306000
9	51411130	Ազդրի օրթոպրոթեզ պլաստիկից										91641	183282	277700	277700
15	51411130	Սրունքի պրոթեզ /կարճ ծայրատի համար՝ ՊՆ3-12										1480347	2960694	4485900	4485900
16	51411130	Սրունքի պրոթեզ /երկար ծայրատի համար/ ՊՆ3-14										498960	997920	1512000	1512000
17	51411130	Սրունքի պրոթեզ /կարճ ծայրատի համար/՝ ՊՆ3-22-1										161040	322080	488000	488000
18	51411130	Սրունքի պրոթեզ /կոսմետիկ երեսապատումով/՝ ՊՆ3-34										389400	778800	1180000	1180000
19	51411130	Սրունքի պրոթեզ /հեռացված է ամբողջ										46860	93720	142000	142000

		ոտնաթաթը, սրունք-թաթային հոդը պահպանված չէ/՝ ՊՆ3-01													
24	51411130	Էնդոսկելիտար սրունքի պրոթեզ /պլաստիկից/՝ ՊՆ8-03										122100	244200	370000	370000
25	51411130	Էնդոսկելիտար սրունքի պրոթեզ մանժետով/լամինացի այով/՝ ՊՆ8-02-1										369270	738540	1119000	1119000
Ընդամենը												**4808397**	**9616794**	**14570900**	**14570900**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար ..... Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Սատար» Հաշմանդամների ՀԿ

Նախագահ..... Հ. Հունանյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն